



ՀՀ ԿԳՆ «ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵՔԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱԳԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ

«MKHITAR SEBASTACI» EDUCATIONAL COMPLEX

MINISTRY OF SCIENCE AND EDUCATION OF THE REPUBLIC OF ARMENIA

0064, Երևան. Բաֆֆու 57 հեն: (374 10) 74 72 46. (374 91) 43 10 99 info@mskh.am www.mskh.am
Raffy 57.Yerevan, tel:(374 10)74 72 46.(374 91)43 10 99 https://www.facebook.com/mxitar.sebastaci?fref=ts

17-08-355

09.08.2017թ.

ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻՆ

Հարգելի բարեկամ.

Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի պետական քոլեջում, միջին մասնագիտական կրթության այլ մասնագիտությունների հետ, 2017-2018 ուսումնական տարում սկսվել է նաև նոր լիցենզավորված մասնագիտություններով ընդունելություն: Այս մասնագիտությունները, կարծում ենք, կարող են հետաքրքրել թե՛ ձեր համայնքին՝ որպես բիզնես-հեռանկար, թե՛ երիտասարդությանը՝ ապագա զբաղվածության տեսանկյունից: Դրանք են՝

- զբոսաշրջային ծառայությունների մասնագետ,
- զբոսաշրջային ծառայությունների մենեջեր,
- հյուրանոցային և զբոսաշրջային համալիրների մենեջեր,
- վայրի բույսերի վերարտադրության մասնագետ (վերարտադրություն, հավաքում և մթերում):

Նոր մասնագիտությունների ցուցակը կցվում է:

Այսօր Հայաստանում զբոսաշրջության զարգացման պետական ծրագրերի տեսանկյունից թե՛ համայնքների և թե՛ այնտեղ ապրող երիտասարդների համար հեռանկարային ու գրավիչ կարող են լինել այս մասնագիտությունները, մասնագետների առկայության դեպքում համայնքում կարող են կազմակերպվել սպասարկման այնպիսի ծառայություններ.

- զբոսաշրջային ծառայություններ՝ համայնքի պատմաճարտարապետական հարստության ներկայացման նպատակով,
- ճանաչողական զբոսաշրջության, այդ թվում՝ էկոզբոսաշրջության կազմակերպում.
- համայնքի մասին պատմա-ճանաչողական տեղեկատվական նյութերի պատրաստում ու հրատարակում.

- կենսառեսուրսների, այդ թվում՝ բուսատեսակների, անտառային ռեսուրսների վերարտադրություն, օգտագործում և իրացում.
- կողմնակի անտառօգտագործում (մասնավորապես՝ վայրի պտղի, ընկույզի, սնկի, հատապտղի, դեղաբույսերի ու տեխնիկական հումքի հավաքում) և դրա արդյունքում մթերված կենսապաշարների վերամշակում ու իրացում.
- և այլն:

Ձեզ կարող է հետաքրքրել նաև այն, որ քոլեջում հաջողությամբ իրականացվում են նաև «Նախադպրոցական դաստիարակություն» մասնագիտությամբ դաստիարակների պատրաստման, մասնագիտական կրթություն ունեցողների մեկամյա-հեռավար վերաորակավորման ծրագրեր, գործող մասնագետների վերապատրաստման դասընթացներ:

Կրթահամալիրը մասնագիտական, այդ թվում՝ նաև **հեռավար կրթության** կազմակերպման մեծ փորձ ունի: Մասնագիտական կրթության կազմակերպման պայմանները.

- արտադրությամբ ուսուցում
- մասնագիտական ուսուցման պատշաճ միջավայր՝ արդիական արվեստանոց-արհեստանոց-լաբորատորիաներով, կրթական փոխանակումների կացարաններով:
- լեզուների ուսուցման բազմազանություն, տարբեր լեզուների որակյալ մասնագետներ,
- Հայաստանի տարածքով մեկ հայրենագիտական և ճանաչողական նախագծերի կազմակերպման հարուստ փորձ,
- կրթահամալիրի կողմից հաստատվող լայն և ակտիվ միջազգային կապեր,
- կրթահամալիրի բազմալեզու կայք, մեդիագրադարան, մանկավարժական և պատանեկան ամսագրեր, բազմալեզու հաղորդակցության փորձ թե՛ ուսուցիչների, թե՛ սովորողների համար:

Ընդունելությունն առանց քննության է:

Քոլեջի շրջանավարտներն ունեն նույն մասնագիտության շրջանակներում առանց ընդունելության քննությունների պետական, հավատարմագրված, բուհերի 2-րդ, 3-րդ կուրս ընդունվելու հնարավորություն:

Շնորհակալ կլինեմ այս տեղեկության հասցեական փոխանցման, տարածման համար:

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք.

- զանգահարել (010) 74 00 22, (094) 13 20 26,
- գրել college@mskh.am հասցեով,
- գալ քոլեջ՝ Երևան, ՀԱԹ Բ-1 թաղամաս, Անդրանիկի 92/1:
Քոլեջի ընդունելության հայտարարությունը՝ mskh.am/am/71283



ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿՐԹԱԿԱՄԱԼԻՐԻ ՏՆՕՐԵՆ՝

Ա. ԲԼԵՅԱՆ

Լիցենզավորված նոր մասնագիտությունները

1. Միջին մասնագիտական կրթություն.			
Մասնագիտությունը	Որակավորումը	Կրթության տևողությունը	
		1) առկա ձևով.	2) հեռակա ձևով.
«Զբոսաշրջություն» 1015.01.5	«Զբոսաշրջային ծառայությունների մատուցման մասնագետ» 1015.01.01.5	ա. միջնակարգ կրթության հիմքով՝ 2 տարի բ. հիմնական կրթության հիմքով՝ 3 տարի	ա. միջնակարգ կրթության հիմքով՝ 3 տարի
«Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» 2-74.30.02	74.30.02.01-4 «Զբոսաշրջության ծառայությունների սպասարկման մենեջեր»	ա. միջնակարգ կրթության հիմքով՝ 3 տարի բ. հիմնական կրթության հիմքով՝ 4 տարի	ա. միջնակարգ կրթության հիմքով՝ 4 տարի
«Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» 0413.05.5	0413.05.01.5 «Հյուրանոցների և զբոսաշրջային համալիրների մենեջեր»	ա. միջնակարգ կրթության հիմքով՝ 3 տարի բ. հիմնական կրթության հիմքով՝ 4 տարի	ա. միջնակարգ կրթության հիմքով՝ 4 տարի
Վայրի բույսերի վերարտադրություն, հավաքում և մթերում 0812.03.5	Բուսաբույծ-տեխնիկ՝ վայրի բույսերի վերարտադրության, հավաքման և մթերման	հիմնական կրթության հիմքով՝ 3, միջնակարգ կրթության հիմքով՝ 2 տարի	